



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՄԱՆ

No 333-Ա/Ք

16.04.2014թ.

<<Լ. ՕՐԲԵԼՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՍՊԸ-Ի ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ
ՍՈՎՈՐՈՂ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտության կրթության
մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին, 3-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ կրթության և
գիտության նախարարի 2014 թվականի ապրիլի 15-ի <<Լ. ՕՐԲԵԼՈՒ ԱՆՎԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՍՊԸ-ի բակալավրի կրթական ծրագրով գործունեության N 0050
լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին N 314-Ա/Ք հրամանը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թվականի հունվարի 23-ի N 55-Ա/Ք
հրամանով <<Լ. ՕՐԲԵԼՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՍՊԸ-ին տրված բակալավրի
կրթական ծրագրով գործունեության N 0050 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու
կապակցությամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի
լիցենզավորման գործակալության պետ Մ.Մովսիսյանին և բարձրագույն և հետբուհական
մասնագիտական կրթության վարչության պետ Ռ.Սուքիասյանին՝ ձեռնարկել
համապատասխան միջոցառումներ <<Լ. ՕՐԲԵԼՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՍՊԸ-ի
բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողների հետագա ուսումնառությունը
պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատություններում
շարունակելու ուղղությամբ՝ նրանց շահերն ու իրավունքները պաշտպանելու նպատակով:

2. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության
նախարարության աշխատակազմի ղեկավար Մ.Ղազարյանին:

Ա.ԱՇՈՏՅԱՆ
/պաշտոնակատար/